ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հուլիսի 16-ի թիվ 347 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԲԱԶՄԱՂԲՅՈՒՐԻ Ն. ՍԱՖԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման հավելված 3-ի 61-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետը, «Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Ղազարյանի 2026 թվականի հուլիսի 16-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Ղազարյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մասը 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 20 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 14-ը ներառյալ:
2. Մարինե Ղազարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել «Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված գրքային աջակցությունների գծով տեղակալ Զինա Համբարձումյանի վրա:
3. Մարինե Ղազարյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 17-ից:

Պարտականությունները կատարող՝

Recoverable Signature

Signed by: HOVHANNISYAN MILADA 6914980608

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի
ք. Աշտարակ